ՏԵՂԵԿԱՆՔ

«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին» համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ

«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին» համաձայնագիրը ստորագրվել է 2018թ. սեպտեմբերի 28-ին Դուշանբե քաղաքում Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության և վավերացվել՝ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության կողմից:

Կողմերը կհամագործակցեն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների կանխարգելման, հայտնաբերման, կանխման, բացահայտման ու քննության ապահովման նպատակով:

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերի համագործակցությունն իրականացվում է անմիջականորեն իրավասու մարմինների միջև, որոնց ցանկը սահմանվում է Կողմերից յուրաքանչյուրի կողմից և փոխանցվում է ավանդապահին սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցագիրը հանձնելիս:

Կողմերի իրավասու մարմինները, անհրաժեշտության դեպքում, կարող են լրացուցիչ սահմանել փոխգործակցության կարգը և դրա իրականացման համար լիազորված անձանց ցանկը, ինչի մասին անմիջականորեն ծանուցում են միմյանց:

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է Կողմերի իրավասու մարմինների՝ աջակցություն ցուցաբերելու մասին հարցումների հիման վրա:

Վերոնշյալ Համաձայնագրի վավերացումը Կողմերի իրավասու մարմիններին հնարավորություն կտա համագործակցություն իրականացնել հետևյալ ձևերով՝

ա) տեղեկատվության փոխանակում, այդ թվում՝

տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում պատրաստվող կամ կատարված հանցագործությունների և դրանց հետ կապ ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերաբերյալ,

նշված ոլորտում հանցագործությունների կանխարգելման, հայտնաբերման, կանխման, բացահայտման և քննության ձևերի ու մեթոդների վերաբերյալ,

տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների կատարման եղանակների վերաբերյալ,

տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների կանխարգելման, հայտնաբերման, կանխման, բացահայտման և քննության հետ կապված հարցերը կարգավորող՝ Կողմերի ազգային օրենսդրության կամ միջազգային պայմանագրերի վերաբերյալ,

բ) տեղեկատվության ստացման գործում աջակցություն ցուցաբերելու մասին հարցումների կատարում, որը կարող է նպաստել հարցում ուղարկող Կողմի քաղաքացու նկատմամբ կամ հարցում ուղարկող Կողմի տարածքում կատարված հանցագործության կանխարգելմանը, հայտնաբերմանը, կանխմանը, բացահայտմանը և քննությանը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին հարցումների կատարում,

գ) համակարգված միջոցառումների ու գործողությունների պլանավորում և անցկացում՝ ուղղված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների կանխարգելմանը, հայտնաբերմանը, կանխմանը, բացահայտմանն ու քննությանը,

դ) աջակցության ցուցաբերում՝ կադրերի նախապատրաստման ու որակավորման բարձրացման գործում, այդ թվում՝ մասնագետների ստաժավորման անցկացման, համաժողովների, սեմինարների ու ուսումնական դասընթացների կազմակերպման միջոցով,

ե) տեղեկատվական համակարգերի ու ծրագրային արտադրանքի ստեղծում, որոնք ապահովում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների կանխարգելման, հայտնաբերման, կանխման, բացահայտման և քննության հետ կապված խնդիրների կատարումը,

զ) հրապարակումների ու գիտական հետազոտությունների արդյունքների փոխանակում, ինչպես նաև համատեղ գիտական հետազոտությունների անցկացում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարի՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ,

է) տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ նորմատիվ-իրավական ակտերի, գիտատեխնիկական գրականության փոխանակում,

ը) ծրագրային արտադրանքի ու որոշումների փոխանակում, որոնք օգտագործվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների կանխարգելման, հայտնաբերման, կանխման, բացահայտման և քննության գործում՝ փոխգործակցության ու փորձի փոխանակման շրջանակներում,

թ) տվյալների համակարգչային համակարգերում պահվող տեղեկությունների պահպանվածության անհապաղ ապահովման մասին հարցման կատարում:

Կողմերի իրավասու մարմիններն ապահովում են սույն Համաձայնագրին համապատասխան ստացված տեղեկությունների, այդ թվում՝ հարցում ստանալու փաստի ու

դրա բովանդակության գաղտնիությունը, եթե հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմինն անցանկալի է համարում դրա հրապարակումը:

Կողմերի իրավասու մարմինները ինքնուրույն կրում են սույն Համաձայնագրի կատարման ընթացքում առաջացող ծախսերը, եթե յուրաքանչյուր առանձին դեպքի համար այլ կարգ համաձայնեցված չէ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ոստիկանությունը նպատակահարմար է գտնում «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության մասին» համաձայնագրի վավերացումը:

ՀՀ ոստիկանության շտաբի պետ,
ոստիկանության գնդապետ **Արմեն Մկրտչյան**